ԴԱՎԻԹ ԳԱՐՍԵՎԱՆԻ
ՂԱԶԱՐՅԱՆ

Խմբավար,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր,
ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ,
Հայաստանի Երաժշտական Ընկերության նախագահ
E-mail: davitghazaryan@gmail.com
Doi: 10.58580/18290019-2023.1.64-54

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի (2.11.2023 թ.)
Գրախոս (30.10.2023 թ.), հեղինակը ներկայացրել է
հրատարակության՝ (22.10.2023 թ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՕՊԵՐԱՆ 155 ՏԱՐԵԿԱՆ Է

Ամփոփում

Հոդվածագիրն անդրադարձել է Հայկական ազգային դասական առաջին՝ Տիգրան Չուխաճեանի «Արշակ Բ» օպերայի 155 ամյակին, որն ստեղծվել է 1868 թվականին: Հոդվածը շատ արդիական է գրված՝ ընդգծելով օպերայի տեղն ու դերն այսօրվա տեսանկյունից այն մեկնաբանումներով: Հոդվածագիրն անդրադարձ է կատարում թե՛ կոմպոզիտորի կյանքին, հատկապես ուսմանն ու կրթությանը, թե՛ հայկական կենտրոնին, թե՛ եվրոպական մշակութային միջավայրին, որը հիմքեր ստեղծեց ազգային օպերայի հիմնադրման համար: Նրա կողմից ստեղծված ոչ միայն օպերային բեմական, ինչպես նաև գործիքային երաժշտության, երգչական ժանրերին անցած նրա կոմպոզիտորական քուրայով: Հոդվածագիրը կարևորում է մեկ և կես դարից ավելի ապրած «Արշակ Բ» օպերայով հայ կոմպոզիտորական ազգային պրոֆեսիոնալ դպրոցի առկայությունը:

Բանալի-բառեր. *Տիգրան Չուխաճեան, ազգային օպերա, կոմպոզիտոր, Իտալիա, Պոլիս, «Grand Opera», «Արշակ Բ» Վիեննա:*

Abstrakt

Choirmaster, Professor of YSC, Honored Worker of Culture of the Republic of Armenia ***David Garsevan Ghazaryan. - "The First Armenian National Classical Opera is 155 Years Old".***

The author of the article touched upon the 155th anniversary of Tigran Chukhajyan's First Armenian National Classical Opera Arshak II, created in 1868. The article is written in a very relevant way emphasizing the place and role of opera from the point of view of today with the comments it gives. The author of the article addresses both the composer's life, especially his studies and education, as well as the Armenian center and the European cultural environment, which laid the foundations for the foundation of the National Opera. He created not only opera, but also stage and instrumental music, genres that have passed the composer's curation of singing. The author of the article emphasizes the importance of the existence of the opera professional composer school "Arshak II", which has existed for half a century.

Key Words: *Tigran Chukhajian, national opera, composer, Italy, Polis, "Grand Opera", "Arshak II", Vienna.*

Абстракт

Хормейстер, профессор Ереванской государственной консерватории им.Комитаса, Заслуженный работник культуры РА ***Давид Гарсеванович Казарян. — "Первой армянской национальной классической опере 155 лет".***

Автор статьи коснулся 155-летия оперы Тиграна Чухаджяна «Аршак II» - первой армянской национальной классической оперы, созданной в 1868 году. Статья написана очень актуально, с комментариями, подчеркивающими место и роль оперы с точки зрения сегодняшнего дня. Автор статьи обращается как к жизни композитора, особенно к учебе и образованию, так и к армянскому центру и европейской культурной среде, которые заложили основы для основания национальной оперы. Приводятся примеры не только оперной, но и сценической, а также инструментальной музыки композитора. Автор статьи подчеркивает важность оперной профессиональной композиторской школы, которая существует уже полтора века.

Ключевые слова: *Тигран Чухаджян, национальная опера, композитор, Италия, Костантинополь, "Гранд- Опера", «Аршак II», Биенна.*

Հայկական օպերային արվեստ

Նախաբան

Պրոֆեսիոնալ հայ երաժիշտների և կոմպոզիտորների հանդես գալու ժամանակը (պրոֆեսիոնալ այսօրվա իմաստով) համարվում է XIX դարի կեսերը: Այդ ժամանակահատվածում հայկական զանազան գաղթօջախներում և մասնավորապես, Կ. Պոլսում սկսում են գործել մեծ թվով այնպիսի երաժիշտներ (հորինող, երգիչ, ուսուցանող, նվագահար), ինչպիսիք են Համբարձում Լիմոնճյանը, Արիստակես Հովհաննիսյանը, Եղիա Տնտեսյանը, Գաբրիել Երանյանը, Ղորղանյան եղբայրները, Նիկողայոս Թաշչյանը և այլ երախտապաշտ բազում արվեստագետներ, որոնց գործունեությունն իրավամբ արժանի է ուշադրության: Այս անունների մեջ առանձնանում է ականավոր կոմպոզիտոր Տիգրան Չուխաճյանը, ով իր արվեստին նվիրված մի առաքյալ էր:

Հայ երաժշտական մշակույթը, հատկապես նրան է պարտական այն բանի համար, որ նա իր ժամանակակիցներից ավելի հմտորեն օգտագործեց արևմտաեվրոպական դասական երաժշտության հարուստ փորձը և այն ծառայեցրեց երաժշտական մշակույթի զարգացմանը: Նա հանդիսացավ հայկական առաջին օպերաների և օպերետտների, ռոմանսների և գործիքային ստեղծագործությունների հեղինակը, երաժշտական առաջին թատրոնի հիմնադիրն ու կազմակերպիչը արևմտաեվրոպական իրականության մեջ, դրանով իսկ դառնալով երաժշտական թատրոնի հիմնադիրը Թուրքիայում և ամբողջ Մերձավոր Արևելքում:

Կոմպոզիտորի երաժշտական ոճի ձևավորումը

Չուխաճյանը ծնվեց այն ժամանակ, երբ տակավին գոյություն չուներ հայ պրոֆեսիոնալ երաժշտություն և այդ առավել քան աննպաստ պայմաններում նրա ստեղծագործությունն սկզբնավորվեց ոչ թե սաղմնային վիճակում, այլ միանգամայն իբրև գեղարվեստական ավարտուն իրողություն:

Հայ երաժշտության առաջին դասականը ծնվեց ոչ որպես ակունք, այլ որպես գագաթ: Նրա կատարած դերը և գրաված տեղը մեր երաժշտության պատմության մեջ բացառիկ է և անփոխարինելի: Այսուհանդերձ նրա կյանքն ու ստեղծագործությունը բավարար լուսաբանում չեն գտել մեր երաժշտության պատմության մեջ: Նրա կենսագրությունից, հատկապես մանկական և պատանեկան շրջանից, շատ քիչ բան է մեզ հայտնի՝ այն, որ ծնվել է Կոստանդնուպոլսում 1837 թ., ժամագործի ընտանիքում: Երաժշտասեր փոքրիկն իր առաջին գիտելիքները ձեռք է բերել դպրոցում, որտեղ այդ տարիներին դասավանդում էր Կ. Պոլսի աչքի ընկած երաժիշտներից մեկը՝ Գաբրիել Երանյանը, և վերջինիս շնորհիվ Տիգրանն ավելի սիրով կապվում է երաժշտության հետ: Այնուհետև հայրը հնարավորություն է տալիս մասնավոր դասեր առնելու իտալացի կոմպոզիտոր-դաշնակահար Մանձոնիից, որի խորհրդով Չուխաճյանը մեկնում է Իտալիա՝ երաժշտական կրթությունը շարունակելու համար:

Ապագա կոմպոզիտորի ճաշակի ձևավորմանը նպաստել են նրան շրջապատող միջավայրի չափազանց բազմազան տպավորություններ: Մի կողմից նրան հարազատ ու սիրելի էին հայկական երգերն ու պարերգերը, որոնք պահպանվել էին Կ. Պոլսի հայ բնակչության շրջանում, մյուս կողմից ամենուրեք նա լսում էր պարսկական, արաբական ու տեղացիների տաճկական երգերն ու մեղեդիները և, վերջապես, եվրոպական ու հատկապես ֆրանսիական սալոնային և օպերային երաժշտություն, որը հաջողությամբ մուտք էր գործել Կ. Պոլիս:

Երաժշտական գիտելիքները կատարելագործելու ծարավը 1861 թ. 24-ամյա երիտասարդին տանում է Միլան: Հենց այստեղ էլ նա ստանում է երաժշտական պրոֆեսիոնալ գիտելիքներ, ձևավորվում որպես կոմպոզիտոր: Հայտնի է, որ XIX դարի կեսերին Միլանը հանդիսանում էր ավստրիական լծի դեմ իտալական ժողովրդի մղած ազատագրական պայքարի գլխավոր կենտրոններից մեկը: Միաժամանակ Միլանը եվրոպական օպերային արվեստի նշանակալի կենտրոններից էր իր հռչակավոր «Լա Սկալա» օպերային թատրոնով, որտեղ 1840-1860-ական թվականներին իրար հետևից բեմ էին բարձրանում Ջոակինո Ռոսսինիի, Վինչենցո Բելլինիի, Գաետանո Դոնիզետտիի ու Ջուզեպպե Վերդիի օպերաները: Այն ենթադրությունը, թե Չուխաճյանը աշակերտել է իտալացի հանճարեղ կոմպոզիտոր Վերդիին, որի արվեստն այնչափ սիրում էր, գնահատում ու հետևում շատ հարցերում, դեռևս մնում է չապացուցված: Ինչպես փաստարկում է երաժշտագետ, պրոֆեսոր Միքայել Տերյանը, Չուխաճյանի Միլանում ուսումնառության տարիներին՝ 1861-1864 թթ. Վերդին գտնվել է ուղևորություններում: Դժբախտաբար մեզ հայտնի չեն այս շրջանի Չուխաճյանի դասատուները: Եվ չնայած դրան, Չուխաճյանը կարող էր իրավամբ իրեն համարել «Իտալական հեղափոխության մաեստրոյի»՝ Վերդիի հոգևոր սանը, որովհետև նրա վրա անջնջելի տպավորություն էին գործել Վերդիի օպերաները և ընդհանրապես իտալական պատմառոմանտիկական օպերան, և նա հետագայում իր օպերային ստեղծագործության մեջ առատորեն օգտագործել է այդ նվաճումները:

1864 թ. Տ. Չուխաճյանի Միլանից Կ. Պոլիս վերադարձը զուգադիպում է հայոց պատմության մեջ մի շատ կարևոր շրջանի հետ, երբ ընդունվում էր «Ազգային սահմանադրությունը» և ամենուրեք տիրում էր եռուզեռ ու խանդավառություն: Կ. Պոլսում այդ շրջանում կազմակերպվում են մի քանի թատերական խմբեր, որոնք գործուն մասնակցություն են ունենում ընդհանուր գեղարվեստական շարժման մեջ: Որոշ խմբեր, որոնք մինչ այդ միայն ներկայացումներ էին կազմակերպում թուրքերենով, սկսում են իրենց խաղացանկում ավելացնել հայկական պիեսներ, որոնց նյութն առնված էր ազգային պատմության էջերից: Այդպիսով, «Ազգային Սահմանադրությունը» թեկուզ չէր հավակնում լուծել հայկական հարցը, բայց գոնե հնարավորություն էր տալիս հայերին զբաղվելու իրենց մասնագիտության, գրականության, արվեստի և կրթության զարգացմամբ:

Իրար ետևից լույս են տեսնում երաժշտական մի շարք պարբերականներ, որոնցից առաջինը «Քնար արևելյան» ամսագիրն էր (1857-1858 թթ.): Նրան հաջորդեց «Քնար հայկական»-ը Գաբրիել Երանյանի և Նիկողոս Թաշճյանի նախաձեռնությամբ, իսկ մեկ տարի անց՝ 1862-1864 թթ. ամսագրի վերստեղծմանն ակտիվ մասնակցություն է հանդես բերում Տիգրան Չուխաճյանը՝ իր հորինած առաջին ազգային-հայրենասիրական երգերը զետեղելով այդ պարբերականներում: Իսկ Կ. Պոլսի թաղային թատրոնների ներկայացումների ընթացքում հաճախ են հնչել երաժշտական հատվածներ, մասնավորապես երգեր: Այդպիսի երգերից է Գարեգին Չափրաստյանի խոսքերով գրված ներբողը, որը մեզ հասել է «Քնար հայկականից» այսպիսի մակագրությամբ՝ «Դաշնակ յառաջին ներկայացման հայկական թատրոնին»: Դա 1859 թվականին էր: Երաժշտությունը Տիգրան Չուխաճյանինն է:

Ահա մի հատված Չափրաստյանի բանաստեղծությունից՝

«Օն մեր նախնի դարուց կարդամք հրավեր,
Նախնի դափնյաց սուրբ ձեռաց հյուս պսակօք,
Մեր հայրենի փառաց մանկունքն անվէհեր,
Գան երեւան գեղեցկահիւս գիտակօք:
Գունդ ի գունդ
Միրտք ի թունդ»:

Հայկական առաջին օպերետտներն ու օպերաները

Հայ թատրոնն ունեցել է երաժշտական ղեկավար՝ հանձին Տիգրան Չուխաճյանի, ինչն ապացուցում է այն հանգամանքը, որ հայկական ներկայացումների ժամանակ միշտ հնչել է երաժշտություն: Հատկապես Կ. Պոլսում զգալի տեղաշարժեր էին կատարվում ոչ միայն դրամատիկական ներկայացումների երաժշտական ձևավորման, այլև երաժշտական թատրոնների ստեղծման ուղղությամբ, քանի որ դրա համար կային որոշակի նախադրյալներ: Այս իմաստով բոլորովին էլ պատահական չէր, որ հենց Պոլսում ստեղծվեցին ոչ միայն հայկական առաջին օպերետտները ու օպերաները, այլև երաժշտական թատրոնները: Դրանք առաջինն էին ամբողջ Մերձավոր Արևելքում և ունեցան պատմական կարևոր նշանակություն:

Տիգրան Չուխաճյանն առաջին հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորն էր՝ զինված ժամանակակից կոմպոզիտորական տեխնիկայով, որն առաջինը ձեռնարկեց արևելքի և արևմուտքի երաժշտարվեստների մերձեցման գործը, հանդիսացավ հայկական առաջին թատրոնի հիմնադիրն ու կազմակերպիչը: Չուխաճյանն Իտալիայից իր հետ բերել էր բեմական երաժշտության լայն պաշար, խորունկ գիտելիքներ, ցանկություն՝ հորինելու հայկական երաժշտական թատերգություններ, որոնց համար, սակայն պակասում էին բեմական և այլ հնարավորությունները: Առաջին հերթին պետք էին մենեղգիչներ, երգչախումբ, նվագախումբ: Չուխաճյանը մի շարք գեղարվեստասեր անձանց օժանդակությամբ կազմակերպում է առաջին պրոֆեսիոնալ երգչախումբը, հայտնաբերում երգիչներ, ղեկավարում սիմֆոնիկ նվագախումբ:

Երգահանը սերտորեն կապվում է ազգային թատրոնի հետ, երաժշտություն գրում թատերական ներկայացումների համար՝ Պետրոս Դուրյանի «Վարդ եւ Շուշան», Թովմաս Թերզյանի «Սանդուխտ», Տիգրան Գալեմճյանի «Արա գեղեցիկ կամ Սէր եւ հայրենիք», Ռոմանոս Սետեւֆջյանի «Վարդան Մամիկոնյան փրկիչ Հայրենեաց», Սրապիոն Թղլյանի «Մեծն Տրդատ և Գրիգոր Լուսավորիչ» և այլն (2. էջ 32-37):

Այս մթնոլորտում է Չուխաճյանը հղացել և հմուտ վարպետությամբ մարմնավորել իր ամենախիզախ ու գեղեցիկ ծրագրերից մեկը՝ ազգային դասական օպերայի ստեղծման գաղափարը: «Արշակ Բ» պատմահայրենասիրական (լիբրետտոն՝ Թովմաս Թերզյանի) հայկական առաջին օպերան է, ուր կերպավորվում է հայոց պատմության IV դարի դրամատիկական դրվագներն ու ողբերգական բախումները, որը գրական երաժշտական իր ամբողջ հյուսվածքով կապված է հայ իրականության հետ՝ արձագանքելով ազգային ազատագրական իղձերին ու ձգտումներին: Դա 1868 թվականն էր: Այս տարեթիվն ունի պատմական մեծ նշանակություն, որովհետև հանդիսանում է հայկական օպերայի ծննդյան թվականը (2. էջ 168-193):

«Արշակ Բ»-ում, հետևելով «Grand Opera»-ի ավանդույթներին, կոմպոզիտորն իր երաժշտական դրամատուրգիան հիմնել է օպերային բազմազան ձևերի վարպետորեն օգտագործման վրա (արիա, արիոզո, անսամբլներ, խմբերգեր, նվագախմբային էպիզոդներ և այլն):

Ժողովուրդն «Արշակ Բ» օպերայում ունի իր տեղն ու դերը և պատահական չեն ժողովրդական զանգվածային տեսարանները, որոնք ներկայանում են երգչախմբի միջոցով, և դա ժողովրդի հույզերի և տրամադրությունների հիմնական արտահայտիչն է, մի դեպքում՝ կանանց, մի այլ դեպքում տղամարդկանց խմբերգերով, իսկ ավելի հաճախ երկսեռ, քառաձայն խմբերգերով: Տ. Չուխաճյանը մեծ նշանակություն է տվել բեմական-երաժշտական տեսարանների ստեղծմանը և այն հասցրել է մոնումենտալ մասշտաբների: Իսկ ամբողջությամբ օպերայի մեղեդային լեզուն արտահայտիչ է, հարուստ և բազմազան: Հետաքրքրական է օպերայի բեմական ճակատագիրը:

Դժբախտաբար կոմպոզիտորի կենդանության ժամանակ այն ամբողջությամբ չի հնչել: Օպերայի նվագախմբային նախերգանքն ստեղծման տարում հնչել է պոլսահայ երաժշտասեր, ճարտարապետ Հակոբ Պալյանի նախաձեռնությամբ, ով և խոստացել էր իր միջոցներով իրականացնել օպերայի բեմականացումը Նաումի թատրոնում: Սակայն հաջորդ թատերաշրջանում հրդեհվում է թատրոնը, որի պատճառով օպերայի բեմադրությունը տեղի չի ունենում: Հետագայում Աբդուլ Համիդի սկսած հալածանքների պայմաններում անհնար էր նույնիսկ մտածել «Արշակ Բ»-ի նման պատմական օպերայի բեմադրության մասին: Առանձին հատվածներ կատարվել են Կ. Պոլսում, Իտալիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, ինչպես նաև «Ռուսական երաժշտական թերթ»-ի 1901 թ. վկայությամբ տեղեկանում ենք, որ 1873 թ. Վիեննայում կայացած Համաշխարհային ցուցահանդեսի օրերին կատարվել է օպերայի նախերգանքը և ունեցել մեծ հաջողություն:

Ավաղ, ստեղծելով նման հայրենասիրական սյուժեով օպերա, հեղինակը ոչ միայն անհույս էր դարձնում նրա բեմադրությունը, այլև իր դեմ ուղղում թուրք իշխանության հարվածներն ու սպառնալիքները: Այդ էր պատճառը, որ հայկական օպերան դեռևս չբեմադրված երկար ժամանակ մոռացության մատնվեց:

Տ. Չուխաճյանի «Արշակ Բ» օպերայի բեմականացումը հնարավոր դարձավ իրականացնել միայն նրա ստեղծումից մոտ 80 տարի անց, 1945 թ. նոյեմբերին, Երևանի օպերային մայր թատրոնի բեմում:

Տիգրան Չուխաճյանը նաև հայկական առաջին օպերետտների հեղինակն է: Նրա օպերետտները հանդիսանում են ինքնատիպ ժանրային կենցաղային երաժշտական կոմեդիաներ, որոնք կառուցված են կոնկրետ նյութի վրա և վերցված են կյանքից: Պատահական չէ, որ շուրջ 100 տարի է տարբեր երկրներում և ժամանակներում մեծ ժողովրդականություն է վայելում և տարածում ունի «Լեբլեբիջի հոր-հոր աղա» կամ «Կարինե» կոմիկական օպերետտը: Ի տարբերություն «Արշակ Բ» ապերայի, այս երկը հեղինակի կենդանության օրոք հնչել է բազմիցս և բեմադրվել է Եգիպտոսում, Հունաստանում, Իտալիայում, Ֆրանսիայում: Այս օպերետտից «Մենք քաջ տոհմի զավակներն ենք» խմբերգը խիստ տարածված է և ձեռք է բերել լայն ժողովրդականություն: Եվ պատահական չէ, որ այն կտրվելով օպերետտից, դարձել է ազգային ազատագրական շարժման խորհրդանիշ:

Չուխաճյանի անվան հետ են կապված նաև հայ դաշնամուրային, վոկալ, գործիքային տարբեր ժանրերի բնագավառում կատարած առաջին փորձերը: Նա ոչ միայն բազմակողմանի զարգացած երաժիշտ էր, կոմպոզիտոր, խմբավար, դաշնակահար և մանկավարժ, այլ նաև խանդավառ հասարակական գործիչ:

Տիգրան Չուխաճյանը հայ իրականության մեջ հանդիսացավ երաժշտական-թատերական ստեղծագործության հիմնադիրը, իսկ նրա «Արշակ Բ» օպերան՝ մեր հայ իրականության մեջ հանդիսացավ ազգային դասական օպերան, որը 155 տարեկան է:

Մեծ կոմպոզիտորը վախճանվեց 1898 թ. մարտի 23-ին Զմյուռնիայում 61 տարեկանում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ասատրյան Ա. Գ,* «Արշակ Բ». Հայոց անդրանիկ օպերան, Եր., Ոսկան Երևանցի, 2006 թ., - 268 էջ:
2. *Թանմիզեան Ն. Կ.,* Տիգրան Չուխաճեան. Կեանքը եւ Ստեղծագործութիւնը, (ԱՄՆ, Կալիֆորնիա) Փասատենա, Դրազարկ հրատ., 1999 թ., - 216 էջ:

Asatryan A. G, "Arshak II". The first Armenian Opera, Yer., Voskan Yerevantsi, 2006, - 268 pages

Thahmizian N. K., Tigran Tchoukhajian. His Life and Work., Drazark Press., Pasadena, California, USA., 1999., - 2016 P.

REFERENCES

Asatryan A. G, “Arshak B”.Hayotz andranik operan, Yer., Voskan Yerevantzi, 2006 th., - 268 ejj.

Thahmizean N. K., Tigran Choukhadchean. Kyanq’ ev Steghtsagortsuthyun’., (California, USA), Pasadena: Drazark hrat., 1999., - 2016 P.

Հեղինակի մասին. *ԴԱՎԻԹ ԳԱՐՍԵՎԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ (ծ. 13.10.1939, Երևան) խմբավար, հաս. գործիչ, մանկավարժ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր աշխատող (1985 թ.): Ավարտել է՝ Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ (1965 թ.), Կոմիտասի անվ. ԵՊԿ սիմֆոդիրիժորության և խմբավարության բաժինները (1971 թ.): Դասավանդում է՝ 1970թ-ից ԵՊԿ-ում խմբավարություն, պրոֆեսոր է (2002 թ.), զբաղեցրել է դեկանի (1995-2015 թթ.) և 2014-ից ռեկտորի խորհրդականի պաշտոնները: 1987-ից եղել է Հայաստանի երաժշտական ընկերության փոխնախագահ, 1996թ-ից՝ նախագահն է: Կազմել և խմբագրել է հայ խմբերգ. երաժշտությանը վերաբերող բազմաթիվ ժողովածուներ՝ «Հայկական խմբերգեր» (1986 թ.), «Հայ կոմպոզիտորների խմբերգերի ընտրանի» (2007 թ.), «Հոգևոր երգեր և խմբերգեր» (2004 թ.), Կոմիտասի «Հոգևոր տաղեր, երգեր, մեներգեր» (2006 թ.), Կոմիտասի «Խմբերգերի ընտրանի» (2001 թ., 2009 թ.) և այլ ժողովածուներ և բազմաթիվ հոդվածներ: Արժանացել է՝ «Մովսես Խորենացի» (2007 թ.), «Ծաղկիր իմ հանրապետություն» փառատոնի (1985 թ.), ՀՀ ՄՆ (2008 թ.), ԿԳՆ (2009 թ.) ոսկե, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի (2016 թ.) մեդալների:*

Сведения об авторе: *ДАВИД ГАРСЕВАНОВИЧ КАЗАРЯН (род. 13.10.1939, г. Ереван), хормейстер, педагог, заслуженный деятель культуры Армянской ССР (1985). Окончил: АГПУ им. Х. Абовяна (1965) и хоро-дирижерское отделение ЕГК им. Комитаса (1971). Преподает в ЕГК (с 1970), профессор (2002), занимал должность декана (1995-2015), советник ректора (с 2014). С 1987 г. - вице-президент Музыкального общества Армении, с 1996 г. - президент. Составитель и редактор хоровых сочинений армянских композиторов, многочисленных музыкальных сборников: “Армянские хоры ” (1986), “Избранные хоры армянских композиторов” (2007), “Духовные песни и хоры” (2004), “Духовные таги, песни, сольные песни” Комитаса (2006), “Сборник собраний хоров” Комитаса (2001, 2009) и др. Автор многочисленных статей в республиканской прессе. Награжден медалями: фестиваля “Цвети моя республика” (1985), “Мовсеса Хоренаци” (2007), Министерства культуры РА (2008), Министерства образования и науки (2009), “За заслуги перед Отечеством” II степени (2016).*

About the author: *DAVID GARSEVAN GHAZARYAN (b. 1939, Yerevan) - Choirmaster, pedagogue, the Honored Art Worker of Armenia (1985). Graduated from Yerevan State Pedagogical Institute (1965) and Yerevan State Conservatory, Department of Choir Conducting (1971). Since 1970 teaches at YSC; professor since 2002. In 1995-2015 served as Dean, since 2014 - the Advisor to the Rector of the YSC. In 1987-1996 has been the Vice President of the Armenian Musical Society, since 1996 - the President of the AMS. D. Ghazaryan is the author and editor of collections of choir works of Armenian composers, such as "Armenian Choir Music" (1986), "Selected Choruses by Armenian Composers" (2007), "Sacred Songs and Choruses" (2004), "Sacred Taghs, Songs and Solo Songs by Komitas" (2001, 2009), etc. He is the author of numerous articles in the Armenian press. David Ghazaryan has been awarded the medal of "May You Blossom, My Republic" Festival (1985); Movses Khorenatsi Medal (2007), The Medal of the Ministry of Culture of Armenia (2008), The Medal of the Ministry of Education and Science (2009), Medal for Merit to the Fatherland, Second Class (2016).*